7304

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«20» 04 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0064-23

Ձեռնարկողը՝ *«Թրասպշին» ՍՊԸ*
Ք.Երևան, Ա. Ահարոնյան փ., 2 շ., 5-րդ հարկ

Գործունեությունը՝ ***Ա. Միկոյան փողոց 107/4 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Քաղաք Երևան, Դավթաշեն վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0064-23

«20» 04 **2023թ.**

Ա. Միկոյան փողոց 107/4 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԹՐԱՍՏՇԻՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Դավթաշեն վարչական շրջան

Ներածական մաս. Բազմաբնակարան բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Ա. Միկոյան փողոց 107/4 հասցեում: Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը, կամ հողատեսքը բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը ընդհանուր համատեղ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա) ենթակետի, այն է՝ 1500 քմ-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական կառույցները:

Նկարագրական մաս. Նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել Երևանի համայնքապետարանի կողմից 26.10.21թ-ին տրամադրած ճարտարապետահատակագծային (N 01/18-07/1-Գ-6797-945) առաջադրանքը և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 30102018-03-0046 վկայականը:

Բազմաբնակարան բնակելի համալիրը բաղկացած է 20 վերգետնյա հարկերից (h-3.30): Նախատեսված է 3 հարկ ստորգետնյա ավտոկայանատեղիներ, 3 վերգետնյա հասարակական նշանակության հարկեր: Մնացած հարկերը նախատեսված են որպես բնակելի հարկեր: Շենքի վերնահարկերը նախատեսված են կասկադաձև, նահանջ հարկերով համաձայն ՃՀԱ-ի: Առաջին մասնաշենքը բաղկացած է 20 հարկից երկրորդը 18, նահանջ հարկերը նախատեսված են 17-րդ հարկից: Ստորգետնյա 3 հարկերն ընդհանուր նախատեսված են 142 մեքենաների համար: Աստիճանավանդակների և վերելակների դռները հակահրդեհային են: Բնակչության սակավաշարժուն խմբերի համար նախատեսված են թեքահարթակներ՝ շինարարական նորմերի պահանջներով: Ստորգետնյա

02543103 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ավտոկայանատեղին անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել որպես ապաստարան, բնակիչների պատսպարվելու համար: Ավտոկայանատեղին կահավորված է սանհանգույցներով և օդափոխության համակարգով:

Բազմաբնակարան բնակելի համալիրը տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

հողատարածքի մակերես՝ 0.32հա,

ընդհանուր կառուցապատման մակերես - 16866մ^2,

կառուցապատման մակերես, ներառյալ ճանապարհներ, անջրանցիկ տարածքներ, սալվածքներ - 1920մ^2,

շենքի կառուցապատման մակերես 0.00 նիշում – 1312մ^2,

անջրանցիկ տարածքներ - 608մ^2 /19%,

կանաչապատման մակերես - 1280մ^2 /40%,

ավտոկայանատեղերի քանակը - 142 հատ,

բնակարանների քանակը - 196 հատ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագծի:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգման ջուրը կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:

Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրվող ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան՝ ջրամիացման, հակահրդեհային հիդրանտի տեղադրման և գոյություն ունեցող կոյուղագծին միացման նախագծային լուծումներին համաձայն: Ջրամիացումն իրականացվելու է Եղվարդի խճուղիով անցնող d=900մմ P=0.01 մթն. պող. ջրատարից: Ջրահեռացման միացման կետը կլինի Եղվարդի խճուղիով անցնող d=1200մմ տրամագծի գործող կոյուղագիծը: Ջրաչափական հանգույցի և հհ հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու է դիտահորեր:

Շենքերի կոյուղաջրերը կհեռացվեն միասնական ինքնահոս համակարգով՝ կանգնակների միջոցով:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կատարվելու է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում կտեղադրվեն անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն միանալով գործող քաղաքային 400մմ հեղեղատար ցանցին: Նույն ցանցով և կհեռացվեն շենքի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները: Ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիէթիլենե Մ200-300մմ խողովակներով:

Բնակելի համալիրի էլ. սնուցումն իրականացնելու համար անհրաժեշտ է կառուցել համապատասխան հզորության ուժային տրանսֆորմատորային ենթակայան: Բնակելի շենքի էլ. սնուցումը կիրականացվի նոր կառուցվող ե/կ-ի 0.4կՎ վահանից, համաձայն տեխնիկական պայմանի:

Բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի գազամատակարումն P=0.3 ՄՊա ճնշման և Q=1050 մ³/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել Երևան – 1 ԳԲԿ-ն սնող Dպ-700 կողմնատար-գազատարի 5.9կմ-ից, համաձայն տեխնիկական պայմանի:

Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 46 ամիս:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստուկցիաների իրականացման համար ընտրված է TEREX CTT 91-TS12 մակնիշի աշտարակային կռունկ:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում: Շինարարկան աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Բանվորական և անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինարարական աշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 26000մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 8000մ³ հետլիցք: Ավելցուկային 18000մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Ըստ հայտում եղած տեղեկատվության հայցվող տարածքում Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ չկան:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Դավթաշեն վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները

-երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը,

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել,

- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության,

-շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
-անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը և ավտոմեքենաների անվադողերի լվացման հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
-շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
-հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

-Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
-Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
-Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
-Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ: Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար ամբողջ շինարության ընթացքում նախատեսվում է 1750000դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Ա. Միկոյան փողոց 107/4 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական ղեկավարի նստավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության և անտառային կոմիտեները:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
-Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
-Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
-Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին:
-Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
-Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Թրաստշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն Ա. Միկոյան փողոց 107/4 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյան